ՄԱՐԻԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՕԺՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Օժտածության խնդրի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հասարակությանն անհրաժեշտ են օժտված, ստեղծագործող մարդիկ: Չնայած խնդրի արդիականությանը, այնուամենայնիվ այն բավարար չափով ուսումնասիրված չէ ինչպես Հայաստանում, Ռուսաստանում, այնպես էլ ամբողջ աշխարհում: Առ այսօր չկա որևէ «ճիշտ» սահմանում, որը կբնորոշի օժտված երեխայի, ինչպես նաև կան բազմաթիվ խոչընդոտներ օժտված երեխաների բացահայտման, նրանց հարմարումը և դաստիարակումը սոցիալական միջավայրում ճիշտ կազմակերպելու հետ կապված: Իրականում ինչպիսի՞ն է օժտվածը, և ո՞ր երեխաներին կարելի է օժտված համարել և ի՞նչ առանձնահատկություններ ունեն օժտվածները: Արդյո՞ք օժտվածությունը բնածին է, եթե այո, ապա որքանո՞վ է դրա զարգացումը պայմանավորված շրջապատից:

Օժտվածությունը պահանջում է ուշադրություն և հոգատարություն: Շրջապատը կարող է խթանել կամ խոչընդոտել դրա զարգացումը: Հետազոտողները տարբեր ժամանակներում խուսանավել են օժտվածության երևույթն ու դրա չափանիշները սահմանելու հարցում և տվել անորոշ ձևակերպումներ: Այնուամենայնիվ մի բան պարզ է՝ այդ երեխաները տարբերվում են մյուս երեխաներից իրենց յուրատիպությամբ, իրենց բացառիկ ընդունակություններով և ունեն որոշակի առանձնահատկություններ: Օժտված երեխաները ավելի բազմակողմանի գիտելիքներ ունեն: Նրանք անկախ են իրենց դատողություններում, ինքնավստահ են, իշխող, ըմբոստանում են ճնշման և սահմանափակումների դեմ, հակված են ինքնահիացման, հարցասեր են, հետաքրքրասեր, ունեն հումորի զգացում, հարուստ երևակայություն և ճկուն ինքնատիպ միտք: Մյսպիսի երեխաները ոչ միայն շուտ են ընկալում, այլ ընկալում են յուրովի, ինքնուրույն, մշակում են հարցերի սեփական պատասխաններ, խնդիրների լուծման նոր սեփական մեթոդներ: Նրանք լինում են իրենց տարիքին ոչ բնորոշ հասուն, ունենում են հարուստ բառապաշար՝ նույնպես տարիքին անհամապատասխան, իսկ ընդունակությունները վաղ են զարգանում: Օժտված երեխաներին ներհատուկ են նաև իմացական հետաքրքրությունները, ամեն ինչ մինչև վերջ հասկանալու ձգտումը, մեծ աշխատասիրությունը և աշխատունակությունը, որևէ բանի մեջ խորասուզվելու հատկությունը: Նրանք զարմանալի

հեշտությամբ կարողանում են կապեր գտնել տարբեր երևույթների և հասկացությունների միջև: Նրանց ամեն ինչ հետաքրքրում է, ամեն ինչ անում են հաճույքով, փնտրում և գտնում են նոր խնդիրներ՝ առանց զգուշության ընդառաջ գնալով դրանց: Բացառիկ հիշողությունը և ճկուն միտքը նրանց հեշտությամբ մղում են ինքնատիպ զուգորդությունների: Համբերատար են, համառ և սկսած գործը միշտ ավարտին են հասցնում: Սակայն դա այն դեպքում, երբ շրջապատը ընդունում է նրանց այնպիսին, ինչպիսին, որ նրանք կան, և նրանց օժտվածությունը չի դառնում խնդիր: Ցավոք, ոչ միշտ է, որ այդպես է լինում: Շատ հաճախ օժտված երեխաները, կապված իրենց յուրատիպ առանձնահատկությունների հետ, ոչ միշտ են գնահատվում և հասկացվում հասարակության կողմից ինչպես հարկն է: Նրանք՝ կապված իրենց մտավոր մեծ ընդունակությունների հետ, զարգացման մեջ շատ առաջ են անցնում իրենց հասակակիցներից (3-ից 4 տարի և ավելի), ունենում են յուրահատուկ հետաքրքրություններ, առանձնահատկություններ, որի հետևանքով հայտնվում են խմբից մեկուսացած վիճակում, երբեմն էլ ծաղրի են ենթարկվում իրենց հասակակիցների կողմից: Օժտված երեխաները հանդիպում են լուրջ դժվարությունների՝ հուզական, իմացական և սոցիալական զարգացումների անհամապատասխանության պատճառով, երբ անձի մի ոլորտն ավելի է զրգանում, քան մյուսը: Այստեղ շատ անելիքներ ունեն թե ծնողները, թե մանկավարժները: Հակառակ դեպքում երեխայի հուզական ոլորտը թերի կմնա, և երեխան ոչ միայն չի ինտեգրվի հասարակության մեջ, և շփման սոցիալական հմտություններ չեն ձևավորվի, այլև ունենալով մտավոր բարձր ունակություններ՝ օժտվածը հոգեպես տհաս կմնա:

Ցավոք, այս երևույթը հաճախ է հանդիպում օժտված երեխաների մոտ և հանգեցնում է նրան, որ երեխան չի բավարարում իր առաջնահերթ պահանջմունքները՝ շփման, իր հնարավորությունները ցուցադրելու միջոցով ինքնահաստատման, ինքնահիրացման և այլն, որի հետևանքով նրա մոտ արգելակվում են ընդունակությունների զարգացումը, ստեղծագործական կարողությունների դրսևորումը և այլն: Բացի այդ, շփման անբավարարվածությունը, կարևոր պահանջմունքների երկարատև ճնշումը հանգեցնում են նրան, որ երեխան հոգեբանորեն օտարանում է հասարակությունից և դառնում ինքնամփոփ, լռակյաց, անտարբեր, մտածկոտ, կամ դրսևորում է ագրեսիվություն, բացահայտ թշնամանք, դեզադապտիվ վարք [1]:

Այսպիսով, օժտվածության երևույթը հաճախ կարող է ուղեկցվել հասարակությունից օտարացվածությամբ, օժտվածների առանձնահատկությունները երբեմն իրենցով կարող են պայմանավորել մերժվածություն հասարակությունից, անհանդուրժողականություն: Ուստի մեր առջև խնդիր ենք դրել ուսումնա-

սիրել օժտված երեխաների փոխհարաբերություններում հոգեբանական օտարացման առաջացման պատճառները ժամանակակից պայմաններում: Բայց մինչ պատճառների պարզաբանումը, օժտվածության խնդրի ուսումնասիրության համառոտ էքսկուրս կատարենք, որպեսզի ավելի լավ պատկերացնենք օժտվածության էությունը:

Ինչպես արտասահմանյան, այնպես էլ ռուսական և հայկական հոգեբանության մեջ, օժտածության խնդրի ուսումնասիրությունը սկսվել է (20-րդ դարի առաջին տասնամյակ) մտավոր զարգացման ուսումնասիրությունից, քանի որ գիտնականների ճնշող մեծամասնությունը համակարծիք էր այն մտքին, որ օժտված են այն երեխաները, որոնք արագ են կողմնորոշվում, խելացի են, հասկացող, հեշտ և արագ են յուրացնում ուսումնական նյութը:

Օժտվածության խնդրի ուսումնասիրության մեջ մեծ ներդրում է ունեցել անվանի հոգեբան Լ. Վիգոտսկին [2]: Նա օժտածությունը դիտում էր որպես գենետիկական պայմանավորվածություն ունեցող ընդունակության տարր, որը զարգանում է համապատասխան գործունեության մեջ կամ դեգրադացնում (քայքայում) դրա բացակայության դեպքում: Նրա կարծիքով, զարգացնող է այն ուսուցումը, որը հիմնվում է կոնկրետ երեխայի մոտակա զարգացման վրա:

Այսպիսով, Լ. Վիգոտսկին դիտարկում է օժտվածության գործնական ուղղվածությունը, որն արդեն դուրս էր օժտվածությանը վերաբերվող պաշտոնապես գոյություն ունեցող դրույթներից:

Օժտվածության խնդրի ուսումնասիրությամբ 20-ական թվականներին կատարվել են առաջին գիտական աշխատությունները (Ա. Բլազունով, Ա. Լյուբլինսկայա, Ա. Մակարովա, Պ. Բլոնսկի, Վ. Արտեմով, Մ. Բասով և այլն) [3]: Այդ ժամանակաշրջանի հետազոտողները փորձում էին պարզել օժտվածության զարգացման վրա ազդող այնպիսի գործոնները, ինչպիսիք են սոցիալական դիրքը, ազգությունը, սեռը, դաստիարակության համակարգը: Ցավոք այդ ծրագրերը չիրականացան. 30-ական թթ.-ներին օժտվածության ուսումնասիրությունները ընդհատվեցին, իսկ հասկացությունը դուրս մղվեց հայրենական հոգեբանությունից: Այդ ժամանակաշրջանի գաղափարախոսության համաձայն հիշխում էր այն տեսակետը, որ «բոլորը հավասար են» և ուսուցումն ու դաստիարակության համակարգը պետք է ուղղված լինի դեպի «միջին երեխան»:

Ինչպես ասում է հայտնի հոգեբան Ա. Դարովսկին, պետական այդ որոշումը, ամենաքիչը 50 տարի ընդհատեց հայրենական հոգեբանության մեջ օժտվածության հետազոտության կապը համաշխարհային գիտական նվաճումներից [4]:

Չնայած տվյալ ժամանակահատվածում ստեղծված արգելքներին, որոշ գիտնականներ (Բ. Տեպլով, Ա. Զապորոժեց, Ս. Ռուբինշտեյն, Լ. Վենգեր, Ն. Լեյտես և այլն) այնուամենայնիվ որոշ քայլեր ձեռնարկեցին այդ ուղղությամբ:

Օժտվածության խնդրի ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականներին մեծ հնարավորություններ տվեց Ի. Պավլովի բարձրագույն նյարդային գործունեության ուսմունքը: Նրա հետազոտությունները ցույց տվեցին, որ անհատական առանձնահատկությունները պայմանավորված են բարձրագույն նյարդային գործունեության տիպի հետ: Դրա հետ մեկտեղ պարզվեց նաև, որ կապված արտաքին ազդեցությունների և նյարդային համակարգի տիպի հետ, ուղեղում առաջանում և ամրապնդվում են տարբեր պայմանական կապեր, որոնք էլ իրենց հերթին մեծ ազդեցություն են ունենում տարբեր նյարդային պրոցեսների վրա: Այսպիսով նկատվում էր ընդունակությունների անհատական տարբերությունների նեյրոդինամիկ հիմքերը [5]: Այս ուղղությամբ աշխատանքները շարունակեց Բ. Տեպլովը [6]: Նա գտնում էր, որ գլխուղեղի կեղևի տարբեր հատվածների առանձնահատկությամբ է պայմանավորված այս կամ այն մասնավոր ընդունակությունների առկայությունը:

Հետաքրքրական է նաև Բ. Տեպլովի այն աշխատանքը, որտեղ նա վերլուծել է մեծ զորավարների հոգեբանական հատկությունները՝ հիմնվելով պատմական փաստերի վրա: Հեղինակը մանրակրկիտ ուսումնասիրության է ենթարկել այնպիսի հատկություններ, ինչպիսիք են մտածողության կոնկրետությունը, արագ որոշումներ գտնելու կարողությունը, կանխատեսելու ունակությունը և այլն: Դրա հետ մեկտեղ պարզել է յուրահատուկ առանձնահատկությունների միասնության խնդիրը, այնպիսի, ինչպիսին են արագ մտածողությունը, բայց անշտապողականությունը, զգուշությունը և համարձակությունը, ճկունությունը և կայունությունը և այլն [7]:

Այս շրջանի հետազոտողները փորձում էին ապացուցել, որ երեխայի զարգացման վրա մեծ ազդեցություն է ունենում միջավայրը, հատկապես սոցիալ-տնտեսական վիճակը: Ավելի քիչ տեղ էր տրվում գենետիկական գործոնին: Սակայն Բ. Տեպլովի հետևորդները ավելի շատ ուսումնասիրում էին ֆիզիոլոգիական տվյալների և գործունեության արդյունքների միջև եղած կոորելացիան (ուսման հաջողություն, աշխատանքի արդյունավետություն և այլն):

70-80 ական թթ.-ներին օժտվածության խնդրի ուսումնասիրության մեջ մեծ ներդրում ունեցան անվանի հոգեբաններ Ա. Մատյուշկինը, Ն. Լեյտեսը և այլոք:

Ա. Մատյուշկինը անդրադարձել է ստեղծագործական օժտվածությանը և հիմնվելով իր ուսումնասիրությունների վրա՝ առաջարկել է զարգացնել երեխա-

ների ստեղծագործական մտածողությունը պրոբլեմային ուսուցման միջոցով [7, էջ 8]:

Ն. Լեյտեսը, որը նույնպես մեծ ներդրում է ունեցել օժտվածության խնդրի ուսումնասիրության մեջ, գտնում էր, որ ընդունակությունները առանձին հոգեկան հատկություններ են, որոնք պայմանավորում են մարդու հնարավորությունները տարբեր տեսակի գործողություններում: Նա նաև նշում էր, որ ընդունակությունները իրենք իրենցով չեն կարող «հասունանալ»՝ անկախ արտաքին ազդեցություններից: Ընդունակությունների զարգացման համար անհրաժեշտ է գիտելիքների և հմտությունների յուրացում, այնուհետև դրանց կիրառում ակտիվ սոցիալական կյանքի ընթացքում [7, էջ 9-10]:

Գրականություն

1. Ավետիսյան Ս.Ս. «Հոգեբանական օտարացման պատճառները օժտված երեխաների փոխհարաբերություններում և դրանց հաղթահարման ուղիները».ատենախոսություն հոգ. գիտ. թեկն. գիտ. աստիճանի հայցման, Երևան 2008թ.
2. Выготский Л. С., Педагогическая психология, М., 2005
3. Ушаков Д. В., Психология одаренности, М., 2000
4. Доровский А. И., Дидактические основы развития одаренности учащихся, М., 1998
5. Лейтес Н. С., Об умственной одаренности, М., 1960
6. Теплов Б. М., Избранные труды, т. 2, М., 1985
7. Теплов Б. М., Проблемы индивидуальных различий, М., 1861